Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Նախագծային ուսուցման դերը սովորողների նախաձեռնողականության և սովորելու կարողունակության զարգացման գործում

Կազմեց՝ Մարտիրոսյան Կարինե
«Կապանի N 13 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Ղեկավար՝ Լուսինե Բալայան

«Կապանի N2 ավագ դպրոց» ՊՈԱԿ

Կապան 2023

Բովանդակություն

Ներածություն 3
Թեմայի ուսումնասիրման նպատակներն ու խնդիրները 5
Գրական ակնարկ 7
Նախագծային ուսուցման կազմակերպման ընթացակարգը 9
Միջնաժամկետ նախագիծ 11
Եզրակացություն 19
Օգտագործված գրականություն 21

Ներածություն

Թեմայի ուսումնասիրման արդիականությունը: Աշխարհում տեղի ունեցող փոփոխությունները պահանջում են մարդուց նոր մտածելակերպ, ընկալում, համագործակցային կարողություններ, նոր կոմպետենցիաներ, նոր դերեր, հմտություններ: Այս պայմաններում կարևոր է հանրակրթության դերի վերահիմաստավորումը: Կրթական փոփոխությունները, զարգացման ուղղություններն ու տեմպերը մանկավարժներից պահանջում են դասապրոցեսի կազմակերպման նոր ձևեր:

Ելնելով նոր հնարավորություններից շատ երկրներում սկսեցին մշակել և ներդնել ուսուցման նոր մոտեցումներ, որոնցում էապես վերանայվում են ուսուցման խնդիրները և ուսուցչի դերը: Նոր տեխնոլոգիաների, համակարգչային ծրագրերի ներդրումն իր անմիջական ազդեցությունն ունեցավ ողջ ուսումնառության վրա: Տեղեկատվական տեխնոլոգիաներն իրենց ուրույն տեղն ունեն նախագծային աշխատանքներ կազմակերպելու և իրականացնելու գործընթացում:

Նախագծային ուսուցման մեթոդը դասվում է փոխներգործուն մեթոդների շարքին, որը հնարավորություն է տալիս սովորողներին ձեռք բերել գիտելիքներ, կոնկրետ հանձնարարություններ պլանավորել ինքնուրույն իրականացնելու համար և նպաստում է սովորողի մեջ այնպիսի կարողությունների զարգացմանը, ինչպիսիք են՝ ճանաչողական, ինքնուրույն գործունեության, համագործակցային, խթանում է հետաքրքրասիրությունը, ստեղծարարությունը, նպաստում է տեղեկատվական տարբեր աղբյուրներից օգտվելուն, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու, խնդիրներ ձևակերպելու և դրանց լուծումներ տալու կարողությունների զարգացմանը:

Այսօր նախագծային ուսուցումը լայն տարածում է ստանում հանրակրթական ուսումնական գործընթացում, որի միջոցով երեխաները ձեռք են բերում հետևյալ ունակությունները՝

- անձնական փորձ
- արդյունքի նախագծում, պլանավորում
- անհրաժեշտ ռեսուրսների հաշվարկում
- որոշումների կայացում
- պատասխանատվության ստանձնում
- կոմունիկատիվ հմտությունների ձեռքբերում
- աշխատանքի ներկայացում

Նախագծային ուսուցման հիմքում ընկած է սովորողի ճանաչողական հմտությունները, սեփական գիտելիքներն ինքնուրույն ձևակերպելու, տեղեկատվական դաշտում կողմնորոշվելու և ստեղծագործական մտածողության ձևավորումն ու զարգացումը:

Նախագծային գործունեությունը դուրս է գալիս ուսումնական առարկայի սահմաններից և ընդգրկում է շրջակա աշխարհի այն ոլորտները, որոնք առավել հետաքրքրություն են ներկայացնում սովորողին: Մեթոդի հիմնական նպատակն է սովորողներին հնարավորություն տալ պրակտիկ խնդիրների կամ պրոբլեմների լուծման պրոցեսում ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ: Ուսուցչին այս գործում հատկացվում է նախագիծը մշակողի, կոորդինատորի, խորհրդատուի և փորձագետի դերերը:1[1]

[1] Տինամական կրթության մեթոդական ձեռնարկ
https://abcfinance.am/ifme/teacher.html

Թեմայի ուսումնասիրման նպատակներն ու խնդիրները

Ժամանակակից մանկավարժության բանաձևերից մեկն է՝ <<Արա', որ սովորես>>:2[2] Հետևաբար պետք չէ սպասել ու ակնկալել, որ ներքոհիշյալ կարողություններն ինքըստինքյան պետք է ձևավորվեն սովորողների մեջ, կամ, որ սովորողներն այդ կարողություններով պետք է դպրոց ընդունվեն: Հենց նպատակային, ճիշտ պլանավորված նախագծային աշխատանքներն էլ կստեղծեն այդ կարողությունները զարգացնելու նպաստավոր պայմաններ:

Նախագծային ուսուցման հիմնական նպատակներն են.

- Նպաստել յուրաքանչյուր մասնակցի ինքնագնահատականի բարձրացմանը:
- Հնարավորություն ստեղծել, որ յուրաքանչյուրն իրեն տեսնի որպես ընդունակ և իրազեկ անհատականություն:
- Մասնակցի մոտ զարգացնել իր և մյուսների դրական կերպարը:
- Սովորողի մոտ ձևավորել իրեն և մյուսներին ստույգորեն գնահատելու հմտություն:
- Ոգեշնչել սովորողներին՝ զարգացնելու կարողությունների «Համագործակցություն» համակարգը:
- Ապահովել սովորողի քննադատական մտածողության զարգացման մեխանիզմը, դրված խնդիրը լուծելու ուղիների որոնման հմտության ձևավորումը:
- Զարգացնել սովորողների հետազոտական կարողությունները (բացահայտել հիմնախնդիրը, հավաքել անհրաժեշտ տեղեկություններ, դիտարկել գործընթացները, ձևակերպել վարկածներ, ընդհանրացնել և այլն) և վերլուծական մտածողությունը:

---

[2] Ես և շրջակա աշխարհը
Տիևանասկան կրթության մեթոդական ձեռնարկ
https://issuu.com/kristmush/docs/_

- Խթանել սովորողի ինքնազարգացումը՝ նոր փորձ ձեռք բերելու, գիտելիքները կիրառելու համար:
- Զարգացնել համապատասխան հմտություններ, ձևավորել կյանքի, աշխարհի մարտահրավերներն ընդունելու համար անհրաժեշտ արժեհամակարգ:
- Ապահովել սովորողների փոխհամագործակցությունը հետազոտական աշխատանքի կատարման ընթացքում:

Նախագծային ուսուցումն իրականացնելու համար առաջադրվել է լուծել հետևյալ խնդիրները.

- Ակտիվացնել իմացական հետաքրքրությունները՝ որոնողական և ստեղծագործական ինքնաարտահայտման միջոցով:
- Ձևավորել ժամանակակից տեղեկատվական դաշտում կողմնորոշվելու տարրական կարողություններ:
- Զարգացնել քննադատական մտածողություն և վերլուծելու ունակություններ:
- Զարգացնել կարողություններ մեծերի օգնությամբ, իսկ հետագայում նաև ինքնուրույն՝ խնդրի լուծման հնարավոր մեթոդների բացահայտման համար:
- Զարգացնել երևակայություն և կոմունիկատիվ ունակություններ:
- Դաստիարակել հարգալից վերաբերմունք ընկերների և մեծահասակների հանդեպ և նրանց աշխարհայացքի նկատմամբ:

Գրական ակնարկ

Նախագծումը բնորոշ է բոլոր մարդկանց. մարդը մշտապես պլանավորում է իր մտքերը, գործողությունները, ապագան՝ իր համար քայլեր մտածելով և իրականացնելով առաջ է շարժվում: <<Նախագիծ>> ֆրանսերենից թարգմանաբար նշանակում է <<դեպի առաջ>>, ճանապարհ դեպի նպատակ:

1918 թ. նախագծային ուսուցման հիմնադիրներից մեկը՝ Ուիլյամ Հերդ Կիլպատրիկն, այսպես է ասել. «Պատկերացրեք աղջիկ, որն իր համար զգեստ է կարել: Եթե նա հոգի է դրել իր աշխատանքի մեջ, աշխատել է պատրաստակամությամբ, սիրով, մտածել է զգեստի ձևը, ինքնուրույն կարել է, ապա սա հենց տիպիկ նախագծի օրինակ է, այս բառի ամենամանկավարժական իմաստով»:

Ժամանակակից մանկավարժության բանաձևերից մեկն է: Այլ խոսքերով այն ասում է, որ յուրաքանչյուր սովորող պետք է հնարավորություն ունենա իրականում այնպիսի գործունեություն ծավալելու, որի ընթացքում նա կարող է ոչ միայն դրսևորել իր ինքնատիպությունը՝ որպես ելակետ ունենալով իր անհատական փորձը, այլև դրա միջոցով սովորելու և հաստատվելու՝ զարգացնելով գործնական կարողությունները:

Նախագծային ուսուցումը կապվում է Ջոն Դյուիի անվան հետ: Այն առաջին անգամ նկարագրվել է 20-րդ դարի 20-ական թվականներին ԱՄՆ-ում կրթական բարեփոխումների շրջանում, ինչի արդյունքում կրթությունը դարձավ աշակերտակենտրոն: Հետագայում այն լայն տարածում ստացավ եվրոպական երկրներում:

Նախագծային ուսուցումը անհատականության վրա հիմնված ուսուցման ձև է, թույլ է տալիս հաշվի առնել երեխայի հոգեկան և ֆիզիկական վիճակը՝ ապահովելով իրատեսական և իրագործելի ուսումնական, իմացական, կոմունիկատիվ ծանրաբեռնվածություն, նախագծի իրագործման ընթացքում անհրաժեշտ է տարբեր մասնագետների ներգրավվածությունը, ինչը կնպաստի երեխայի խնդրի բազմակողմանի լուծմանը թիմային մոտեցմամբ:

Այդ իսկ պատճառով որոշեցի հենց իմ հետազոտական աշխատանքով բացահայտել աշակերտների ուժեղ և թույլ կողմերը: Աշխատանքում ներկայացրել եմ նախագծային ուսուցման կազմակերպման ընթացակարգը և նախագծային

աշխատանքի օրինակ, որը նպաստում է արդի պահանջներին համապատասխան քաղաքացու ձևավորմանը:

Երբ <<Մաթեմատիկա>> առարկայի մեջ ինտեգրվեց ֆինանսական բաղադրիչը փորձեցի պարզել, թե ի±նչ գիտեն աշակերտները և ծնողները փողի մասին, ինչպե±ս են աշակերտները ծախսում իրենց տրված գումարը և ըստ ծնողների, ե±րբ պիտի դպրոցում սկսել ֆինանսական կրթությունը:

Այս աշխատանքում կարևոր էր <<եռամիասնության>> կանոնը, այսինքն՝ ուսուցչի, աշակերտի, ծնողի համագործակցությունը:

Սովորողների մոտ ձևավորվեց ինքնավերլուծության և հետազոտական կարողություններ, համագործակցային աշխատանքի և կառավարման հմտություններ, հաղորդակցական որակներ և վերջապես, սեփական աշխատանքը ներկայացնելու կարողություններ:

Նախագծային ուսուցման կազմակերպման ընթացակարգը

Նախագծերը կարելի է դասակարգել տարբեր սկզբունքներով.

Նախագծերն ըստ մասնակիցների թվի լինում են՝

- անհատական
- խմբային

Նախագծերն ըստ տևողության լինում են՝

- կարճաժամկետ՝ 4-6 դաս
- միջնաժամկետ՝ 1-4 շաբաթ
- երկարաժամկետ՝ 4 շաբաթից մինչև 1 տարի

Նախագծերի տեսակներն են՝

- գործնականակողմնորոշիչ նախագիծ
- անհատական նախագիծ
- տեղեկատվական նախագիծ
- ստեղծագործական նախագիծ
- դերային նախագիծ

Նախագծային ուսուցումը նպաստում է՝ ռեֆլեկտիվ (կիրառական), որոնո-ղական, հետազոտական, համագործակցային, կառավարման, շնորհանդեսների պատրաստման, ներկայացման կարողությունների ու հմտությունների զարգացմանը:

Նախագծային աշխատանքի կատարման քայլաշարն է.

- նախագծային թեմայի ընտրություն
- թեմայի տրոհում ենթաթեմաների
- նախաձեռնող խմբերի ձևավորում
- տեղեկատվության հավաքագրում
- տեղեկատվության քննարկում և մշակում
- թեմայի վերաբերյալ եզրահանգումների ձևակերպում
- հետազոտական հաշվետվության նախապատրաստում

- նախագծի պաշտպանություն (սահիկահանդես)
- արդյունքների ամփոփում

Նախագծի արդյունքը տեսանելի, ներկայանալի հրապարակված աշխատանքն է:

Նախագծի իրականացման փուլերն են՝

- նախապատրաստական կամ մոտիվացման փուլ
- պլանավորման
- հետազոտական
- արդյունքների ներկայացման
- գնահատման և վերլուծության

Նախագծային ուսուցում իրականացնելիս կարևոր է հաշվի առնել՝ սովորողների տարիքային առանձնահատկությունները, հետաքրքրությունները, ՏՀՏ հմտություն-ները, լեզուների իմացությունը:

Իրականացրել եմ միջնաժամկետ նախագիծ, 4-րդ դասարանում <<Մաթեմատիկա>> առարկայից: Փորձել եմ նախագծային աշխատանքի միջոցով պարզել երեխաների և ծնողների պատկերացումները <<Ի՞ՆՉ Է ՓՈՂԸ>> թեմայի շրջանակներում:

Միջնաժամկետ նախագիծ

Նախագծի թեմա՝ Ի՞ՆՉ Է ՓՈՂԸ

Հետազոտության ընթացքը

Հետազոտության նպատակը՝ Նախագծային ուսուցման դերը սովորողների նախաձեռնողականության և սովորելու կարողունակության զարգացման գործում

Վարկած՝ Փողի մասին որոշակի գիտելիքներ ունենալով կկարողանանք գիտակցաբար տնօրինել այն

Հետազոտության օբյեկտը՝ Արմավիրի մարզի Մյասնիկյանի Արայի անվան միջնակարգ դպրոցի 4-րդ դասարան

Հետազոտության առարկան՝ Մաթեմատիկա

Ուսումնասիրման նպատակը ՝ Փողը որպես արժեք գիտակցելու և այն նպատակային օգտագործելու կարողության ձևավորում

Հետազոտության մեթոդները ՝ Տեղեկատվություն, վերլուծություն, հետազոտություն, համեմատություն

Ակնկալվող արդյունքներ՝

1. Կիմանան ինչպես է առաջացել փողը:
2. Կգիտակցեն փողի կարևորությունը որպես «արժեք» և դրա դերը կյանքում:
3. Կհասկանան, որ ունեցած փողը անսահմանափակ չէ:

4. Կգիտակցեն, թե ինչ է նշանակում <<խնայել>> և <<ծախսել>>:
5. Կկատարեն եզրակացություն փողի խելացի օգտագործման վերաբերյալ:

Նախապատրաստական կամ մոտիվացման փուլ- Դասարանին ներկայացրել եմ իմ մտահղացումը, ստեղծել եմ դրական, մոտիվացնող տրամադրություն: Սովորողները քննարկեցին այն և առաջարկեցին իրենց գաղափարները: Նախքան գործունեության անցնելը պարզաբանեցի մի քանի հարցեր.

1. Ի±նչ նատակ է հետապնդում նախագիծը:
2. Ինչո±վ է պայմանավորված նրա ստեղծման անհրժեշտությունը:
3. Ինչպե±ս հետագայում կարող է օգտագործվել այն:

Այս հարցերի պատասխաններն օգնեցին սովորողներին պատկերացում կազմել աշխատանքի և թեմայի մասին, սահմանեցին նպատակ, որից հետո դասարանը բաժանվեց խմբերի և սկսվեց ժրաջան աշխատանքը: Խմբերին առաջադրեցի հետևյալ հարցերը՝

I խումբ՝ Ինչպե՞ս է առաջացել փողը:

II խումբ՝ Ի՞նչ նպատակով և ինչպե՞ս են մեր հասակակիցները ծախսում մեծահասակների կողմից իրենց տրված գումարը:

III խումբ՝ Ի՞նչ կարծիք ունեն դասարանի ծնողները երեխաների ֆինանսական գրագիտության վերաբերյալ: Ե՞րբ պետք է սկսել ֆինանսական գիտելիքների ուսուցանումը և ինչպե՞ս պետք է իրականացվի:

Պլանավորման փուլ - Իրականացվել է միջնաժամկետ նախագիծ, որի տևողությունը կազմել է երկու շաբաթ:

Ռազմավարություններ - Նյութերի ուսումնասիրություն, հարցումներ, աղյուսակներ, տեղեկատվության վերլուծություն, համեմատություն:

Հետազոտության հարցեր

I խումբ՝ /սովորողներ/	II խումբ /սովորողներ/	III խումբ /ծնողներ/
1. Հարց: Ինչպե՞ս է առաջացել փողը:	2. Հարց: Ի՞նչ նպատակով, ինչպե՞ս են մեր հասակակիցները ծախսում մեծահասակների կողմից իրենց տրված գումարը:	3. Հարց: Ի՞նչ կարծիք ունեն դասարանի ծնողները երեխաների ֆինանսական գրագիտության վերաբերյալ: Ե՞րբ պետք է սկսել ֆինանսական գիտելիքների ուսուցանումը և ինչպե՞ս պետք է իրականացվի:

Հետազոտական փուլ – իրականացվել է ներքոհիշյալ քայլերը.

- աղբյուրների ուսումնասիրություն
- տեղեկատվության մշակում
- եզրահանգումների ձևակերպում
- արդյունքների ներկայացման ձևի ընտրություն

Արդյունքների ներկայացման փուլ

I խումբ - Աշակերտներն արդյունքները ներկայացրեցին պաստառի միջոցով: Կատարել էին ուսումնասիրություններ՝ փողի պատմության, արժույթի, տեսակների մասին: Գունավորել և ստեղծել էին պաստառ, որը փակցված էր դասարանում և օրինակելի և կիրառելի պաստառ էր համարվում նաև այն դասարանների համար, որոնք նոր էին ուսումնասիրում <<Փող, մետաղադրամներ, թղթադրամներ, ՀՀ դրամ>> ուսումնական թեման:

II խումբ – Աշակերտներին անչափ հետաքրքրել էր, թե ճիշտ են իրենց հասակակիցները ծախսում այն գումարը, որ տալիս են ծնողները առօրյա կարիքները հոգալու համար:

Քաղցրավենիք-	10 աշակերտ
Ուտելիք-	16 աշակերտ
Խնայողություն-	9 աշակերտ
Զվարճալիք-	25 աշակերտ



III խումբ – Այս խմբին առաջադրված էր երեք հարց:

1. Ի±նչ կարծիք ունեն դասարանների ծնողները երեխաների ֆինանսական գրագիտության վերաբերյալ:

Ո՞ր տարիքից պետք է երեխային գումար տալ ծախսելու համար: Պատկերը հետևյալն է՝

10 տարեկանից-29

7 տարեկանից-25

6 տարեկանից- 5

Չտալ ընդհանրապես -1



2. Ո՞վ պետք է երեխաներին սովորեցնի փողի հետ վարվելու կանոնները:

Ծնողները- 35

Դպրոցը- 18

Հեռուստատեսությունը- 4

Չեմ կարող ասել -3



3. Ո՞ր տարիքից պետք է սկսել ֆինանսական կրթությունը

1-2-րդ դասարաններ -21

3-4-րդ դասարաններ – 30

9-10-րդ դասարաններ -9



Գնահատման կամ վերլուծության փուլ

I խումբ

Փողը յուրահատուկ ապրանք է, որը կարող է փոխանակվել բոլոր ապրանքների հետ, ինչպես նաև չափել մյուս ապրանքների արժեքը: Փող է համարվում այն, ինչը տվյալ հասարակությունը, պետությունը ճանաչում է որպես պաշտոնական միջոց:

II խումբ

Երեխաները հիմնականում իրենց ունեցած գումարը ծախսում են սննդի և զվարճալիքների համար, քանի որ այդ ամենը նրանց համար անհրաժեշտություն է: Նրանք նաև որոշակի խնայողություններ են կարողանում կատարել:

III խումբ

Մեր ծնողները համոզված են, որ սկսած առաջին դասարանից երեխաները պետք է ունենան ֆինանսական գիտելիքներ, որպեսզի կարողանան գիտակցել խնայողության անհրաժեշտությունը, կարողանան տնօրինել իրենց գումարները:

Այսպիսով՝ հետազոտության ընթացքում մենք պարզեցինք.

- Ինչպես է առաջացել փողը:
- Փողը կարող ես ձեռք բերել աշխատելով:
- Փողը պահելու ամենաապահով վայրը բանկն է, քանի որ այնտեղ այն «աշխատում է»:
- Փողն ունի իր կենսագրությունը:
- Բոլոր ընտանիքներն ունեն ընտանեկան բյուջե:
- Պետք է սովորել ճիշտ վարվել փողի հետ:

Նախագծային աշխատանքի իրականացումից հետո հասկացա, որ երեխաներն հետազոտողի և պարզողի դերում լինելով հանդերձ իրենց դիմաց կարծես բացել էին մի նոր աշխարհ, նորովի էին տեսնում և ընկալում <<Փող>>, <<Թղթադրամ>>, <<Դրամ>>, <<Արժույթ>>, <<Բանկ>>, <<Ավանդ>> հասկացությունները և այն ամենը ինչը կապված էր <<փողի>> հետ: Մինչ նախագծային աշխատանք իրականացնելը թեման այսքան մեծ խանդավառություն և գիտելիք չէր տվել սովորողներին /անցկացրել էի նախնական թեստ ծնողների և աշակերտների հետ <<Ի±նչ է փողը թեմայով>>/:

Երբ նրանք հանդես եկան պրպտողի, փնտրողի, հետազոտողի, քննարկողի և վերլուծողի դերում, յուրաքանչյուրն էլ ունեցավ հանձնարարության իր բաժինը, այստեղ շահեց սովորողը՝ գիտելիքը մնայուն էր: Սովորողները խանդավառված էին, երջանիկ, քանի որ աշխատանքն իրենցն էր:

Համեմատություն անցկացրեցի սովորողների և ծնողների ունեցած նախնական և նախագծային աշխատանքի ավարտից հետո ստացած գիտելիքները <<Ի±նչ է փողը>> թեմայի վերաբերյալ ապա ունեցանք հետևյալ պատկերը:





Եզրակացություն

Այսպիսով՝ կրթության մեջ անհատական մոտեցումը առաջացրեց նորը դասապրոցեսում կիրառելու պահանջ, որի արդյունքում առաջ եկավ նախագծային ուսուցումը:

Համոզված եմ, որ նախագծային աշխատանքը ճիշտ կազմակերպելու և իրականացնելու արդյունքում՝

- կձևավորվի ակտիվ, ինքնուրույն սովորողների համայնք
- կզարգանան հետազոտական, ստեղծագործական, որոնողական հմտություններ
- կձևավորվի ինքնագնահատական և կնպաստի նրա սոցիալականացմանը
- կձևավորվեն հմտություններ, որոնք սովորողները կկիրառեն գործնականում
- կապահովվի կյանք – կրթություն իրական կապը
- կարագացնի օտար լեզուների յուրացումը

Եվ այսպիսով՝ նախագծային ուսուցումը բարձրացնում է սովորողների նախաձեռնողականությունը, նպաստում է սովորելու կարողունակության զարգացմանը, քանի որ նախագծային աշխատանքը իր ձևով տարբեր է, այն բացահայտում է սովորողների հետաքրքրությունների շրջանակը, ապահովում է գիտելիքների և կարողությունների պրակտիկ կիրառությունը, նպաստում է նախաձեռնողականության, հնարավորինս ինքնուրույնության զարգացում, դպրոցից, դասարանի տարածքից դուրս գիտելիքների և հմտությունների ձեռք բերմանը, սովորողները ցուցաբերում են ստեղծագործական մոտեցում, կարողանում են ներկայացնել աշխատանքի արդյունքը:

Յուրաքանչյուր նախագիծ ներառում է իրական աշխարհի համատեքստը, առաջադրանքներն ու գործիքները, որակի չափորոշիչները կամ ազդեցությունը:

Նախագիծը արտացոլում է սովորողների կյանքի անձնական խնդիրները, հետաքրքրությունները: Սովորողներն որոշումներ են կայացնում նախագծի

վերաբերյալ, ներառյալ այն, թե ինչպես են աշխատելու և ինչ են ստեղծելու, նախագիծն իրենցն են համարում, քանի որ իրենց խոսքն են ասել դրա ստեղծման գործում: Այդ դեպքում նրանք ավելի ջանասիրաբար են աշխատում, նախագծի իրականացման վերահսկողությունն իրենց ձեռքն են վերցնում, որոշում են իրենց դերը աշխատանքի բաժանման ընթացքում՝ որպես աշխատանքային թիմի անդամ՝ կրում են պարտավորություն, որն էլ բարձրացնում է աշխատանքի արդյունավետությունը և մեծացնում է սովորելու ցանկությունը:

Նախագծային ուսուցման մեթոդը կարևոր տեղ է զբաղեցնելու ուսուցման ժամանակակից մեթոդների շարքում, քանի որ 21-րդ դարի նորագույն մանկավարժական տեխնոլոգիաներից է, որը թույլ է տալիս անհատականացնելու ուսուցման գործունեությունը:

Եվ եթե այսօր իրականացնում ենք ֆինանսական կրթություն ինտեգրված <<Մաթեմատիկա>> առարկային ապա ցանկալի է կիրառել ուսուցման աշակերտակենտրոն մոտեցում՝ համադրելով ակտիվ ուսուցման մեթոդներ, որոնց հիմքն է կազմում նախագծային ուսուցումը:

Այստեղ ուսուցիչը ստանձնում է մշակողի, համակարգողի, փորձագետի, խորհրդատուի դեր: Սա նշանակում է, որ նախագծային ուսուցման մեթոդի հիմքում ընկած է սովորողի ճանաչողական հմտությունների, սեփական գիտելիքներն ինքնուրույն ձևակերպելու, տեղեկատվական տարածքում կողմնորոշվելու, քննադատական, ստեղծագործական մտածողության ձևավորումն ու զարգացումը, որն էլ նպաստում է, սովորողների նախաձեռնողականության և սովորելու կարողունակության զարգացմանը:

Արդյունավետ դասն այն չէ, որում ամեն ինչ ընթանում է այնպես, ինչպես նախատեսված է այլ այն, ուր և՛ սովորողները, և՛ ուսուցիչները միմյանցից սովորում են:

Չկա պատ, այլ ստեղծված է կամուրջ ինչը և ուսուցման արդյունավետության հիմքն է[3]:

[3] /Ս.Խաչատրյան, Կամուրջներ պատերի փոխարեն, Անտարես, Երևան 2014/ https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf

Օգտագործված գրականություն

1. <<Նախագծային մեթոդի հիմունքները>> մեթոդական նյութ
2. Ուղերձ ուսուցչին 4-րդ սկզբունքը մեթոդական ձեռնարկ
3. <<Նախագծային կրթական տեխնոլոգիա>>
4. ՖԿ մեթոդական ձեռնարկ
   <<Ես և շրջակա աշխարհը>> առարկան դասավանդողների համար
5. ՖԿ մեթոդական ձեռնարկ
   <<Մաթեմատիկա>> առարկան դասավանդողների համար
6. Ուսուցման արդյունավետ հնարներ: Հեղ՝ Ս.Խաչատրյան, https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf
7. Մասնագիտական առարկայի կրթության բովանդակությունն արտահայտող փաստաթղթեր/չափորոշիչ, ծրագիր, դասագրքեր/:
8. Ամիրջանյան Յու., Սահակյան Ա., Մանկավարժություն, -Եր.:Մանկավարժ, 2005,